

ՏՈՍՍ

ՊՈՏԵՆՑԻԱԼԵՆ ՊՐՈՑԵԴԱՐԱ...

Վերջերս քիչ մը անելի ուշադրութեամբ հետեւեցայ Հայաստանի պատկերասփիռի կայաններուն արբանեակային հաղորդումներուն եւ անելի կեդրոնացած կարգացի «Երկիր» շաբաթաթերթի յօդուածներն ու յուրերը: Գրութիւններուն եւ հաղորդումներուն մէջ նշեցի բառեր, որոնցմէ խուճր մը կ'ուզեմ յանձնել ձեր ուշադրութեան: Անմիջապէս անելոցն է, հետեւաբար ատկէ պիտի ներկայացնեմ միայն խուճր մը:

Սկսինք: Խարտիս, պոտենցիալ, ֆակտուալ, մեխանիկ, ստրատեգիա, սոցիոլոգ, էկոնոմիկա, մոնիթորինգ, արտակարգ, ռազմապետ, օբյեկտ, տեխնոլոգիա, պոտենցիալ, էլեկտրակէտրոնիկ, թիւ, էներգետիկ, կոռուպցիա, հակակոռուպցիա, կոալիցիա, կոմպրոմատ, ադմինիստրատիվ ռեսուրս, խոշորամասշտաբ, ինտելեկտուալ, պրոցեդարա, կոնկրետ, ռեժիսոր, ինտենսիվ, պրովայտեր, պրոտյուսէր, ինկուբատոր, պրոտայ, օպտիկական, ինտրոյուկ, օպերատոր, մոնտաժող:

Պատկերը ահաւոր է: Հայրենի մամուլը եւ պատկերասփիռի կայանները պիտի ըլլան հայերէնի նախանձախնդիր պահակները եւ թոյլ պիտի չտան, որ հայաստանեան խօսակցական հայերէնին մէջ արմատացած բառեր, որոնց բոլորին ալ ճիշդ հայերէն հոմանիշը կայ, տարածուին ու նուիրականանան նաեւ իրենց միջոցով:

Սփիռքի տարածքին նուազ տազնապահար չէ հայերէնը: Մենք ալ ունինք մեր ահաւոր սխալները եւ շատ յաճախ մեր աւուշաղբուներն են տգիտութեան պատճառով ահաւոր եւ անընդունելի սխալներ կ'ընենք: Ոչ որ յաւակնութիւնը ունի որ ինք անսխալական է եւ կատարեալ հայերէնի կը տիրապետէ: Հոս ալ, մեր թերթերուն եւ հաղորդումներուն մէջ բազմաթիւ սխալներ կը սպրդին, պարզապէս որովհետեւ բառակազմի հոգածու եւ բժախնդիր չենք մեր մայրենիին նկատմամբ: Կ'արժէ օր մըն ալ կեդրոնանալ մեր սխալներուն վրայ եւ նշել պատճառը: Սակայն մեր պարագային ոչ որ ինքնուրուի արտօնութիւն տուած է խօսակցական հայերէնին մէջ յաճախ գործածուած արարքերէն, ֆրանսերէն եւ թրքերէն բառեր գործածելու մեր թերթերուն սինակներուն մէջ: Կրնա՞ք երեւակայել խայտառակութիւնը, եթէ մենք ալ մեր հայրենի պաշտօնակիցներուն հետեւողութեամբ մեր յօդուածներուն կամ հաղորդումներուն մէջ գրէինք ու գործածէինք օրինակ՝ մասուհա, ուստա, մունտարա, դեշքիլեթ, փարլուման, ամպաստոր, օֆիս, եւ տակաւին ուրիշ բազմաթիւ բառեր, զորս քիչ թէ շատ բոլորս ալ կը ծամծրմենք մեր խօսակցութիւններուն ընթացքին:

Պէտք չկայ յիշեցնելու, որ լեզուն կը պահպանուի ճիշդ խօսելով եւ գրելով: Չեմ գիտեր, որ կոռուպցիաները եւ պրովայտերները մեզ Հայաստանի եւ Սփիռքի մէջ ուր կրնան հասցնել: Այս խայտառակ հայերէնը ով որ արմատացուցած է, ինչ պատիժի արժանի է, այդ ալ չեմ գիտեր:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ՇԱՐՈՆ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ ԵՐՐՈՊԱՑԻՆԵՐՈՒՆ՝ ՃՆՇՈՒՄ ԲԱՆԵՑՆԵԼ ԻՐԱՆԻ ՎՐԱՅ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն երկ կոչ ուղղած է եւրոպացի երեսփոխաններու, որ Իրանի վրայ ճնշում բանեցնեն, ամբաստանելով, թէ այդ երկիրը «Իսրայէլի համար գլխաւոր սպառնալիքն է» եւ կը փորձէ «հաւաքական քանդումի վէճքեր ձեռք ձգել»:

Ան նաեւ Իսրայէլի խորհրդարանին ըսած է, թէ կը գնահատէ Եւրոպայի ճիգերը՝ համոզելու Իրանը, որ արտօնէ ՄԱԿի քննիչներուն կորիւնքին իր գործունէութիւնը մանրամասն քննելու համար, սակայն ան պոչաւորութեան կոչ ուղղած է:

Ե. Միութեան երեք մեծագոյն անդամ երկիրներուն՝ Բրիտանիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարները անցեալ շաբաթ Թեհրան մեկնած էին Իսլամական հանրապետութեան կոչ ուղղելու համար, որ կորիւնքին Ուժանիթի Միջազգային Գործակալութեան պահանջներուն ենթարկուին:

Իրան համաձայնած էր կորիւնքին վէճքերու տարածումը արգիւղող համաձայնագիրին կապուած յաւելեալ փորձագոյ մը կ'ընէ՝ արտօնելով քննիչներուն կողմէ կորիւնքին իր կեդրոններուն անակնկալ այցելութիւններ:

Շարոն ամբաստանած է նաեւ Իրանը՝ «պաղեստինեան ահաբեկչութիւն հովանաւորելու» յանցանքով, ըսելով, որ Իրան «գործօն է Իսրայէլի արաբ բնակչութեան եւ Լիբանանի մէջ» Հըրպալայի միջոցաւ:

Ըստ վարչապետին, Իրան Հըրպալայի ճամշարը՝ էջ 10

ST. MARC MEDICAL & DIAGNOSTIC CENTER
ՈՉ ԳՈՑ «ԳՆԳԱՂ»Ի, ՈՉ ԱԼ ՆԵՂ «ՆՈՂՈՎԱԿ»Ի ՄԸ ՄԷՋ ՄՏԵԼԵՆՈՒ ԿԵՐՒՄԸ ՄԵՆԱՑ ԱՅԵԼԵՍ. ԱՐԳԻ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ
ԳՈՑ MRI ԳՈՑՍԵՐՆԵՑ ԲԱՑ MRI-ով
ՎԱՍԵՆԱԼՈՒ ՊՍՏԱՍԻ ՉՄՆԱՑ ԲՈԼՈՐ MRI ԵՎԱՐԱՎԱՍՏԱՆ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԵՅՈՂ ՀԻՄՆԱԳՆԵՐՈՒՄ, ՇՆՈՐՀԻԻ
ՇՐՋԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՄԻԱԿ ԲԱՑ MRI-ին
ՈՐ ՄԵՑ ՅԱՅՈՂՈՒԹԵԱՐ ԿԸ ՇՆՐՈՒՄԱԿ ԳՈՐԾԵԼ ՍԵՆ ՄԱՐՔ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ
ԳԵՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԳԻՄԵԼ՝ 01-56 66 33 01-57 65 65 01-58 26 58 03-23 88 87
GE SIGNA PROFILE ULTRA OPEN MRI 15mT/s

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ
(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)
Համագործակցութեամբ՝ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին
ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒԻ ԽՏԱՅԵԱԼ ԳԱՍԸՆԹԱՅՔ
Հայերէնի բարելաման անվճար ձեռնարկ՝ պատմագիտութեան, երիտասարդներու, մայրենիով դասաւանդող ուսուցիչներու եւ հայկական հաստատութիւններու պաշտօնեաներուն համար
90 Ժամեայ դասաւանդութիւն՝ 4 Նոյեմբեր 2003 - 13 Յունիս 2004
Դասաւանդութեան օրեր՝ ամէն Երեքշաբթի եւ Հինգշաբթի, երեկոյեան Ժամը 5:00 - 6:30, Մ. եւ Հ. Արլանեան ճամարան, Մրզիեր:
Դասընթացի ասարդին՝ համապատասխան վկայագիր
Մանրամասնութեանց համար հեռաձայնել 04 - 712603, 04 - 712604, 03 - 429685 քիւրուրն
Մայրենիի կատարելագործման կրթիկ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ
(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)
Հայկական Նախակրթարաններու Ուսուցիչներու Որակաւորման Գասընթացը
Համագործակցութեամբ՝ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին
ՆՊԱՍԱԿ Ուսուցիչներ օժտել անհրաժեշտ գիտելիքներով, համապատասխան լիբանանեան կրթական նոր համակարգի առաջարկներուն:
Դասախօսութիւններ, քննարկումներ, գործնական կիրարկումներ եւ խմբակային աշխատանք:
Տեղորոշում 2003 Նոյեմբերէն 2004 Յունիս
Ամիսը մէկ անգամ՝ Շաբաթ օրերը, Ժամը 8:30-էն 1:30
Վայրը՝ Մ. եւ Հ. Արլանեան ճամարան, Մրզիեր
Դասընթացի ասարդին՝ համապատասխան վկայագիր
Մանրամասնութեանց համար հեռաձայնել 04 - 712603, 04 - 712604, 03 - 429685 քիւրուրն

السفير | السفير | السفير | السفير | السفير

27 Հոկտեմբերի լիբանանեան օրաթերթերը գլխաւորաբար լուսարձակի տակ առած են Իրաքի մէջ անեքիլեան փնտրութիւններուն դէմ շարունակուող յարձակումները եւ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան փոխ նախարար Փոլ Վոլֆովիցի իշխանած պանդոկին վրայ արձակուած հրթիռներուն երեւոյթը: Միջազգային եւ շրջանային լուրերու կարգին պաղեստինեան տագնապը, իսրայէլեան բռնաբարքներու պաղեստինցիներու քանդումը կը հանդիսանան գլխաւոր լուրերը: Լիբանանեան կեանքը յուզող լուրերու կարգին՝ 2004ի պետական պիտակէտ տակաւ պիտակէտ անոր առնչութեամբ կեցուածքներն ու զիրքորոշումները կը մնան գլխաւոր իրար արձուցանող թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերիի գլխաւորած խորհրդարանական պատուիրակութեան այցը Սուրիա:

«Նահար» գրած է, թէ նոր տագնապ մը յայտնուեցաւ պետական պիտակէտի դիմաց, երբ շինարարութեան խորհուրդին 110 միլիարդ չեղեալ նկատուեցաւ: «Անուար»-ի համաձայն, քաղաքական հարուածները կը սպառնան պետական պիտակէտի թիւերուն: Թերթը նշած է, թէ Նեպիի Պրերիի գլխաւորած պատուիրակութիւնը ունեցաւ Սուրիոյ նախագահին հետ սուրիական լիբանանեան կեցուածքներ մերժեցին սպառնալիքներու ձեռնարկի նախնաճի դիմելը: «Սաֆիր» նշած է, թէ նախագահ Լահուտի կ'ուզէ վաւերացնել պետական պիտակէտ, եթէ հարկը ըլլայ քուէարկութեամբ: Վարչապետ Հարիրի ղիտել տուած է, թէ կողմնակի խօսակցութիւններն ու իրարայր շահաւորը Իսրայէլն է: «Քիֆահ Արապի»-ի համաձայն, 29 հրթիռ տեղաց Միացեալ Նահանգներու պատասխանատուին գրտնուած պանդոկին վրայ, իսկ Փաուրլի վարձակը կը յայտնէ յարձակումներուն հա-

տարածայնութիւնները կրնան ծխաւական պաղեստինցիներուն նախարարաց խորհուրդի ժողովին վրայ: «Քիֆահ Արապի» գրած է, թէ նախարար Միւնիքաթ Թերթին հետ ունեցած հարցապարզումն ընթացքին ըսած է. «Կը մերժեմ տուրքերը, իսկ պետական պիտակէտի փոփոխութիւն կարելի չէ ընել եւ այս մէկը կարգաւ չէ կարգ մը անձերու քննահանդիքին կամ յամառութեան»:

«Նահար» գրած է, թէ մինչ Իսրայէլ յարձակումներ կը գործէ եւ մեծ թիւով պաղեստինցիներ փողոցը կը ձգէ, Համաս կը պատրաստուի Քորէյի համաձայնագիր քննարկելու: «Հայթ» գրած է, թէ Քորէյ կը փորձէ լուծում մը գտնել ներկա իրախիճակին, իսկ Իսրայէլեան ուժերը կը շարունակեն իրենց բռնաբարքները:

«Անուար»-ի համաձայն, Սուրիա ըսած է. «Կողմնի իսրայէլեան բնակավայրերը պիտի հարուածենք եթէ քարտէսայ յարձակումներ իրաքցիներուն կողմէ: Թերթը նշած է, թէ յարձակումները կը շարունակուին եւ կը հարուածեն անեքիլեացի պատասխանատուները: Ըստ «Սաֆիր»-ի, իրաքեան ընդհանուր իրաքեան հրթիռները կը հալածեն «պատերազմի երկրաչափը»: Թերթը նշած է, թէ իրաքեան պատուիրակութիւնը հանդիպում կ'ունենայ նախագահ Ասատի հետ, որ կը շեշտէ, թէ շրջանին մէջ տեղի ունեցող իրար արձուցանող լուրերուն գլխաւոր շահաւորը Իսրայէլն է:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, 29 հրթիռ տեղաց Միացեալ Նահանգներու պատասխանատուին գրտնուած պանդոկին վրայ, իսկ Փաուրլի վարձակը կը յայտնէ յարձակումներուն հա-

տարածայնութիւնները կրնան ծխաւական պաղեստինցիներուն նախարարաց խորհուրդի ժողովին վրայ: «Քիֆահ Արապի» գրած է, թէ նախարար Միւնիքաթ Թերթին հետ ունեցած հարցապարզումն ընթացքին ըսած է. «Կը մերժեմ տուրքերը, իսկ պետական պիտակէտի փոփոխութիւն կարելի չէ ընել եւ այս մէկը կարգաւ չէ կարգ մը անձերու քննահանդիքին կամ յամառութեան»:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Վերջին Ազգային մահուան առիթով, փոխառ ծաղկեպակի Ս. Զ. Սանկանց եկեղեցուց յղած են հետեւեալ նուիրատուութիւնները. 3արուրին Պալպանեան 20,000 լ. ո., Սկո եւ Երմիճե Պատրոսեան 20\$, Սանկանց Կարապետ 40,000 լ. ո., Տիգրան Սաֆայեան 40,000 լ. ո., Տանիլ եւ Սոնա Տաղարեան 20\$, Սիրո Նալպանեան 20\$, Գաֆա Սուրի 20,000 լ. ո., Գրիգոր Դաւարեան, Գեորգ Կալպանեան, Սուրբ Թովմասեան, Պողոս Գուլպանեան, Ներսես Սապուհեան 50,000 լ. ո., Երեմ ճղղալեան 20,000 լ. ո., Նիքոլայ Չալլու 50,000 լ. ո., Կարապետ Կիւրիպետեան 25,000 լ. ո., Պերճ Կիւրիպետեան 100,000 լ. ո., տոքթ. Աւետիս Տաղտեան 20\$, Գրիգորեան Կարպիս 10\$, Սերժ Նալպանեան 10\$, տիկին Ուլանա Մուրատեան 20,000 լ. ո., Յովհաննէս Տարազեան 20,000 լ. ո., Կարոյան Փափայեան 50,000 լ. ո., Գեորգ Պոյաճեան 30,000 լ. ո.:

ASHJIAN TOURSH ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
1) Այս Կիրակի, 2 Նոյեմբեր, միտեալ շրջապտոյտ դէպի Դամասկոս, Մետոյա, Մալուա, կիսօրուան ձաշով, միայն 20\$, առանց ձաշի՝ 12\$:
2) Նոր Տարին Կիարոսի մէջ 30 Դեկտեմբերէն 2 Յունուար, յորս օր APOLLONIA BEACH 5 աստղանոց շքեղ պանդոկ, միայն պտոյտներ, օր մը Նիկոսիա, օր մը Այնաբա, Լարնաց, Թրոսոս Լեւոնթ, կենցաղապարհական պարտէզ: Փին փոխան 575\$ միայն 335\$, իսկ Les Palmires Achass պանդոկը, Լարնաց փոխան 385\$ միայն 240\$:
3) Սոտ օրէն Դայաստանի օդանաւի տոմսերու նոր զեղչուած գինը եւ 8 օր եւ 15 օրեայ շրջապտոյտներու գինը:
4) Օդանաւի զեղչուած գինով տոմսեր: Աչանան քուր 01-261177, 240654 եւ 03-233978:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ԼՈՒՐՁ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՁ

(ՊԵՏՔ Է ԴԱՍԵՐ ՔԱՂԵԼ ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵՆԷՆ)

Ամերիկայի մէջ մշակութային աշխատանքը շատերու կողմէ կը նկատուի դժուար, «անպտուղ», կամ լաւագոյն պարագային՝ ինքնապատակ: Ետեր տեղի անտեղի յառաջ կը բընեն «ամերիկեան պայմանները դժուար են» բնութագրումը, որ ըստ մեզի՝ միայն պատասխանատուութեան խոյս տալու լաւագոյն պատրուակն է, որովհետեւ կարելի չէ ցոյց տալ միջավայր մը, ուր պայմանները «դիւրին» են:

Մօտաւորապէս 7 տասնամեակ առաջ, երբ հիմնուեցաւ Համազգայինը, պայմանները ոչ թէ դժուար, այլ գրեթէ յուսահատական էին:

Նախ՝ նկատուեցաւ միջավայրը եւ մթնոլորտը: Միջին Արեւելքի հայկական գաղութները, ուր ծնունդ առաւ Համազգայինը, շեշտուած կերպով գաղթականական նկարագիր ունէին: Եղեռնէն փրկուած բեկորներ կային հայկական գրեթէ իւրաքանչիւր գիւղէ ու քաղաքէ: Իւրաքանչիւրը Մ. Արեւելքի զանազան երկիրներ հասած էր Ցեղասպանութեան անուսարսափի, «չոք»ի հոգեբանութեան բարդ ներաշխարհով: Տարբեր էին խօսուող բարբառները՝ մէկը միւսը չհասկնալու չափ. երբեմն տարբեր էին նոյնիսկ լեզուները, որովհետեւ կար բազմաթիւ մեծ գանձուած մը՝ կիրիլիպայէն գաղթած: Չկային ազգային-հասարակական, քաղաքական կամ այլ բնոյժի կառոյցներ, տակաւին նոր սկսած էր կազմաւորուիլ ազգային կեանքը՝ մինչեւ նոյնն գոյութիւն ունեցող եկեղեցիներուն շուրջ: Մեր ժողովուրդը կը պարզէր անգոյն ու անդիմագիծ ամբոյնի մը կերպարանքը՝ իր ներքին մուր հակասութիւններով, դառնութիւններով եւ տարաբնոյժ ճիւղաւորուած ու կենցաղով:

Անբրաժէշտ էր այս բոլորը հասարակ մէկ յայտարարի շուրջ համախմբել, զայն դաստիարակել, յոյս ներշնչել, ազգային դիմագիծը վերականգնել ու ամբողջ վերածել կազմակերպուած հաւաքականութեան: Ահաւասիկ այս մթնոլորտին մէջէն էր ու այս առաջադրանքով էր, որ Նիկոլ Աղբալեան եւ Լեւոն Շանթ հիմը կը դնէին Համազգայինին, որպէսզի մշակութային, կրթական ու հրատարակչական աշխատանքներու միջոցով կարելի ըլլայ ամբողջ ժողովուրդի վերածել:

Եւ յաջողեցան: Սերունդ մը ետք արդէն պատկերը այլեւս ուրիշ էր: Հակասութիւնները մեղմացած էին, թրքախօսութիւնը՝ նուազած, որովհետեւ այդ գանձուածին երեսները այլեւս նորարար հայկական վարժարաններ կը յաճախէին, կ'անդամակցէին սկստական-մարզական կամ պատանեկան միութիւններու եւ հոն կը ստանային ազգային-գաղափարական դաստիարակութիւն: Մամուլը, իր կարգին, իբրեւ լրատու աղբիւր, կը հանդիսանար նաեւ իւրայատուկ դպրոց մը՝ հայերէն գրաճանաչութեան անուղղակիօրէն մղում՝ տուող:

Այդ օրերու մեր հանրային կեանքի ղեկավարութիւնը ստանձնած կազմակերպութիւնները, ներառելով Համազգայինը, նիւթական աւելի բարձր պայմաններու մէջ չէին գտնուէր: Սակայն չմոռնալով հիմնական ազգային մը՝ լեռներ շարժող հաւատքն ու տեսլականը:

Ամերիկեան մեր ներկայ, եթէ ուզենք բաղդատել այդ օրերու Միջին Արեւելքի կացութեան հետ, նմանութեան բազմաթիւ եզրեր ունի: Յատկապէս Արեւմտեան Ամերիկայի մէջ ապրող հայութիւնը եկած է քաղաքական, ընկերային, տրմանական եւ մշակութային յաճախ ամբողջութեամբ տարբեր միջավայրերէ: 1920ական կամ 1930ական թուականներուն նման (երբ բարբառները տիրական էին եւ թրքախօս-հայախօսի հակադրութիւնը կար), այսօր եւս իրարու հասկընալու դժուարութիւններ ունին: Այսօր եւս մշակութային-ընկերային կամ նոյնիսկ կենցաղային առօրեայի կապուած հակացողութիւնները ստեղծած են տարբեր հոգեբանութիւններ:

Եւ ուրեմն, մեր կարծիքով, կարիք չկայ անիւր վերստին հնարելու: Մօտաւորապէս 7 տասնամեակներ առաջ մեր ղեկավար սերունդը այդ խնդիրը լուծեց եւ Համազգայինը այդ լուծումի կարեւոր մարտավարութիւններէն մէկն էր: Հետեւաբար նոյն Համազգայինը, որ քանի մը օր առաջ տօնեց իր հիմնադրութեան 75ամեակը, կը գտնուի ձեռով նոր, սակայն խորքին մէջ նոյն մարտահրաւերներուն դիմաց: Եթէ ասոնց վրայ աւելցած են ներկայ դարու արհեստագիտական զարգացումէն ու համաշխարհայնացումէն եկող վտանգները, նոյն այդ յիստական ազգակները իրենց հետ կը բերեն նաեւ նոր գեները՝ որոնք կը դիւրացնեն Համազգայինի աշխատանքը: Կը բաւէ, որ լաւապէս սերտեց նորագոյն արհեստագիտութեան կողմէ մեզի ընծանուած այդ միջոցները՝ լատենտոգրական, թէ այլ բնոյթի:

Այո, Համազգայինը այսօր կը գտնուի նոր մարտահրաւերներու դիմաց, գործ դիմագրաւելու համար պէտք է լաւագոյն օգտագործել իր գիւնդանցի մէջ գտնուող պատմական փորձառութիւն ունենալու առաւելութիւնը:

Ուսանելի է նախդեռնի մէկ արտայայտութիւնը՝ անկարելի նկատուած առարկութիւններու դիմաց. «Յանդգնութիւն, յանդգնութիւն, մի շտ յանդգնութիւն»: Համազգայինը կրնայ եւս տեղի մը սերունդ նոր օրերու պահանջով նետուած

ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԵՏՔ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԱՅՅԻ ԵԿԱՒ ՄԵՁԻ

Տարին ամբողջ փառաւորուեցաւ Սուրբ Գրիգոր Նարեկացին, համայն հայութեան կողմէ: Հայաստանէն Սփիւռք կազմակերպուեցան հանդիսաւոր հանդիպումներ, ալլազան նախաձեռնութիւններ: Հոգեւոր թէ աշխարհական իմաստով կազմակերպուած հանդիպումներուն մէջ իր ուրոյն ազդեցութիւնը ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանաւորութիւնը վայելած Նարեկեան Փառաբանը, Ուրբաթ, 24 Հոկտեմբեր 2003ի երեկոյեան, Անթիլիասի Մայր տաճարին մէջ: Մասնակցութեամբ կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութեան հայրերուն, սարկաւազներուն, մոմերու լուսաւորութեամբ տաճարը զգեցաւ խորհրդաւոր մթնոլորտ, ներկայ բազմաթիւ հաւատացեալները փոխադրելով 10րդ դար, Միջնադար: Մոմի լոյսին յիշեցնէր մեզի ունայնամտութիւնը, չարիքը, նախանձն ու ոխը մարդուն եւ պիտի հրաւիրէր մեզ մեր սրտերէն ու հոգիներէն թօթափելու բեռը մեղքին, յանցանքներուն:

Գրքոյնները բաշխուած էին հաւատացեալներուն, որոնք հետեւեցան հոն արձանագրուած աղօթքներուն, որոնք բացումը կը կատարէր Կորիւն արք. Պապեան, ընթերցելով Արամ Ա. վեհափառին բանաստեղծաւուն մէկ երկը՝ նուիրուած Նարեկացիին: Կորիւն սրբազան տպաւորիչ ընթերցանութեամբ, ամուսնաբային ոճով ներկայացուց վեհափառին երկարաշունչ ստեղծագործութիւնը, որ կը հիւսէր փառքը Նարեկացիին հանձարին:

Գրիգոր Մ. վրդ. Զիֆթեան եղաւ զլիւար ամուսնորդը, Նարեկի Բանին ու բառերուն մեկնաբանիչը ուրոյն ոճով:

Յայտագիրը շարունակուեցաւ միայն Նարեկեան ստեղծագործութեան հետեւողութեամբ. շարականներ, մեղեդիներ, մերթ Լուսինէ Զաքարեանի ձայնով, մերթ եկեղեցական հայրերու, սարկաւազներու եւ ժառանգաւորներու ձայններով, խմբերգ ու մենբերգ, ամուսնք ու տաղասացութիւն, զգոյն ու «Մեղայ», միախառնուեցան իրարու, ցնցելով հոգիները ներկայ ժողովուրդին:

Դարերու ընթացքին պաշտուած «Նարեկ»ը իբրեւ բուժիչ սուրբ գրականութիւն, եղաւ յոյսն ու հաւատքը հայ մօր, որուն բարձին տակ իբրեւ պահպան Նարեկացի վանեց չարն ու չարիքը, դարմանեց ցաւերը, չքացուց արտերը, յոյսի դուռները բացաւ, որովհետեւ հաւատացեալը գիտցաւ խօսիլ Նարեկացիին հետ, հաւատալով անոր բարեսիրտութեան, առ երկնաւոր Հայր:

Բազմաձայն էր փառարանները. աղօթքներն ու մեղեդիները, տաղերն ու շարականները ներգործեցին հոգիներուն այնպիսի խորհրդաւոր գորութեամբ, զոր մեկնաբանեց իւրաքանչիւր մասնակից իր ներաշխարհային զգացողութեամբ:

Դարերու ընթացքին մեր աղօթասաց մայրերուն եւ աղջիկներուն ներկայութիւնը վկայեցին երեք ամուսնորդներ՝ Իրմա Տէտեան, Մակի Մկրտիչեան, Անուշ Գերպապեան, իւրաքանչիւր իր իւրայատուկ



ձայնակցութեամբ յիշեցուց աստուածային գորութեան մխիթարութիւնը, հին դարերէն եկած հաւատքով:

«Ի խորոց սրաի խօսք ընդ Աստուծոյ»ն եղան նոյն ատեն «Խօսք ընդ Նարեկացի», որուն հոգին հոգակուեցաւ անկասկած հազարամեայ իր ննջատունէն, իր յաւերժական բնակարանէն:

Չլրդ դարու մեքենայացած մեր առօրեային մէջ այս մխիթար պահը վերափոխեց ներկաներուն մտածողութիւնը, որ հաստատուած մը եղաւ մնալուն արժէքներուն անժամանցելի ուժին եւ գնալուն՝ միջամտութիւններու ձախողութեան:

Գեղարուեստին գեղեցկութիւնը, երաժշտութեամբ եւ հոգեչունչ միտքերով, անգամ մը եւս փառաւորուեցաւ յիշատակովը այս Մեծ Սուրբին, որուն անմահական «դեղը», բուժիչ բալասան «Նարեկ»ը համարուեցին համայն հոգիները:

Դարերու կ'անցնին, բայց Նարեկացի կը մնայ յաւերժութիւն իր անկրկնելի բերթողութեամբ, իր հանճարափայլ գորութեամբ, բազմալեզու թարգմանութեամբ, ինչպէս եղած էր իր մաղթանքը:

24 Հոկտեմբեր 2003ի Անթիլիասի Մայր տաճարին մէջ տեղի ունեցած Նարեկեան Փառաբանմանը գրողուեցաւ հոգիներուն մէջ, ու Նարեկացիին փառաւորուեցաւ Չլրդ դարու հայ մարդուն շուրջներով:

Արդարեւրուն յիշատակը օրհնութեան աղօթք է, որ կը հնչէ նոյնիսկ դարերու խորերէն, իրբեւ խորհուրդ անիմանալի:

ՇԱՀԱՆԳՈՒՄՍԻ

ԱԶԳ. «Գ. ԿԻԻԼ ՊԷՆԿԵԱՆ» ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆ-ԱՅՆՃԱՐ

Ազգ. «Գ. Կիլիպէնկեան» երկրորդ վարժարանի տնօրէնութեան հրաւերով, Ուրբաթ, 24 Հոկտեմբեր 2003ին Այնճար այցելեց YASA (Youth Association for Social Awareness) ընկերակցութիւնը, որ իր գործունէութեամբ կը մշակուի փոխանցելի տղաները:

պուլեան (World Health Organization) ներկայացուցիչ պրն. Թալալ Ապպաս, YASA-ի նախագահ պրն. Զիւրաբ Զաքարի եւ Սուրիոյ թերթերու թղթաւիզ կից պրն. Մոհամէտ Քասէմ:

փոխանցումը՝ ապահովագրելով ժողովուրդին կեանքը:

Տեղի ունեցաւ նաեւ յատուկ ներկայացում՝ մասնակցութեամբ Լիբանանի Կարմիր խաչին եւ Քաղաքացիական Պաշտպանութեան ուժերուն: Ցուցադրուեցաւ, թէ ինչպէ՛ս կարելի է ինքնաշարժ արկածի մատնուած անձ մը ապահով ձեռնով հրահրանալ նոց փոխադրել եւ փրկել անոր կեանքը:

Զեւնարկը, որ YASA-ի 2003-2004 տարեշրջանի գործունէութեան առաջին հանգրուանն էր, մեծ խանդավառութիւն ստեղծեց աշակերտութեան եւ ներկայներուն մօտ:

Նախ, YASA-ի ներկայացուցիչը յատուկ զասախօսութեամբ մը վարժարանի աշակերտութեան ներկայացուց թերթեկութեան կանոնները, որմէ ետք անոնք աւելի ունեցան փոքր ինքնաշարժներով կիրարկելու իրենց փոխանցումը:

Ապա, վարժարանին շրջափակէն ներս տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւնը՝ ներկայութեամբ գիւղին քաղաքապետին, Հ. Յ. Գ. «Կարմիր Լեռ» կոմիտէի ներկայացուցիչին, վարժարանի խնամակալութեան, գիւղի հոգեւոր հայրերուն, երեք դպրոցներու աշակերտութեան, ծնողներու եւ հայրենակիցներուն: Ներկայ էին նաեւ Լիբանանի Քաղաքացիական Պաշտպանութեան Պեքաշի շրջանի պատասխանատու պրն. Թոնի Ապու Զէյտան, Սուրիոյ Քաղաքացիական Պաշտպանութեան Մագգէլ շրջանի պատասխանատու պրն. Զասսան Մալաս, Համաշխարհային Առողջապահական կազմակեր-

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Մշակութային Ժամ

«ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՅԱՏԵՄԱՆ ՄԱՐՏԱՐԱԽԵՐՆԵՐԸ»

Կը դասախօսուի՝
(Անգլերէն լեզուով)
ՓՐՈՖ. ԷՏՈՒԱՐՏ ԹԻՐԻԱՔԵԱՆ
(Տիլք Ըամալսարան - Սիպեալ Նահանգներ)

Տեղի կ'ունենայ Հիմնադրութեան 30 Հոկտեմբեր 2003, Երեկոյեան Ժամը 7:00ին, Ըայկազեան Ըամալսարանի հանդիսարանին մէջ:

www.lemagan.com

«ԱԶԴԱԿ»

ՊԵՄԱՌ ԴԵՍ

Մօւ Օպտէ...

ԸԱՅ ԴԱՏ

ԸԱՅ ԴԱՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԾՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ՝

ՎՐԱՍՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԿԸ ԴԱՐՊԱՍԵՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՔՈՒԷՆԵՐԸ

«Ա-ինֆո» լրատու գործակալությունը կը հաղորդէ, թէ Վրաստանի մէջ 2 Նոյեմբերին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն կապակցութեամբ կը շարունակուի վրացական քաղաքական ուժերու դեկլարանքներուն եւ պետական այրերուն այցելութիւնը երկրի հայաբնակ շրջանները, հայկական քուէներուն տիրանալու յոյսով:

Վրաստանի մէջ նախապէս տեղի ունեցած ընտրութիւններուն թիֆլիսահայութիւնը սովորաբար իր ձայնը տուած է իշխանութիւններուն: Սակայն, 2 Նոյեմբերին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւնները կրնան բացառութիւն կազմել եւ լուրջ պատճառներ կան ասոր համար: Իշխանական «Յանուն Նոր Վրաստանի» նախընտրական դաշինքի ցուցակին մէջ առաջին հայը, Աւետիս Ստեփանեան կը գտնուի... 54րդ տեղը, մինչդեռ նոյն ցուցակին մէջ, իրմէ առաջ կան երկու ազգերիներ՝ 38րդ տեղը գրաւող Մուսայրա Քարայեւ եւ 50րդ տեղը գրաւող Դաւիթ Ախմետով: Նոյն ցանկի 60րդ տեղը գրաւող Կիլիկ Շուկարովի եւ 108րդ տեղը գրաւող Ալեքսանտր Մովսիսեանի միջեւ եւս կան եթէ ազգերիներ:

Հետաքրքրական է նաեւ այն, որ հակառակ այն իրողութեան, որ վրացիներէն ետք հայերը թիւով բնակչութեան երկրորդն են երկրին մէջ, իշխանական պլուրին մէջ հայերէն առաջ է նաեւ ուսուցող Զաստիսով, գրաւելով 44րդ տեղը, ուսուցիչ Օվասանիբեովան՝ գրաւելով 45րդ տեղը: Այս բոլորէն ետք, բնական է թիֆլիսահայութեան ղեկավարութիւնը: Չի բացառուիր, որ այդ ղեկավարութիւնը տարածուի նաեւ Վրաստանի հայաբնակ այլ շրջաններ, ուր հայերը միայն խորհրդանշական կերպով ընդգրկուած են իշխանական ցուցակին մէջ:

Որոշ աղբիւրներու համաձայն, յատկապէս վերաբերական է վան Բայրուրիեանի հեռացումը: Ան խորհրդարանին մէջ ամէնէն գործունեայ հայ պատգամաւորն էր: Նոյն աղբիւրները միաժամանակ կը նշեն, որ համաձայնարար այս անգամ թիֆլիսահայութեան ձայներուն մեծամասնութիւնը բաժին հասնի «Պուրճանածէ-ժողովրդավարներ» դաշինքին:

ՓԻԹԸՐ ՊԱԼԱԳԵԱՆԻ «ԱՅՐՈՂ ՏԻՂՐԻՍ»Ը ԿԱՐԴԱՅԱԾ ԹՈՒՐԵԻ ՄԸ ՄԵՂԱՅԱԿԱՆԸ

«ՄԵԾ ՀԱՅՐԱ ԴԱՀԻՃ ՄԸՆ ԷՐ»

Ամերիկահայ մտաւորական Փիթըր Պալագեանի վերջին աշխատութիւնը՝ «Այրող Տիղրիս» գիրքը, որ կ'առնչուի Հայկական Տեղապահութեան, հրատարակուեցաւ 30 Սեպտեմբերին և շուտով նկատուեցաւ ամերիկեան պետք սեղըններու շարքին: Ստորեւ տրուած գրութիւնը կը պատկանի թուրք-ամերիկացիի մը, որ չէ բացայայտած իր ինքնութիւնը: Այնքան է, որ կարողաւ ետք «Այրող Տիղրիս»ը, այս թուրքը ինքզինքն ղեկավարած գտած է ճշմարտութիւններու, որոնք այլապէս իր գիտակցութեան մէջ մաս կը կազմէին մեծ հոր պատմած դրուագներուն: Ողջունելի է իր մեծ հոր ողբերգութիւնը ըլլալու իրականութիւնը ընդունելու այս թուրքին համարձակութիւնը ու քաջութիւնը: Նշենք, որ ինքզինքն իբրեւ «ընթերցող» ներկայացնող թուրքին գրութիւնը, գոր կու տանք թարգմանաբար եւ ամբողջովին, լոյս տեսած է համացանցին վրայ գիրքեր վաճառող քանի մը կայքերու «տեսակետ»ներու բաժինին մէջ. գրութիւնը, որ նաեւ «կը ըջի» forwardներու միջոցով, մղած է նաեւ այլ ընթերցողներու ողջունումի եւ շնորհակալական անակներ հրապարակելու: Ստորեւ կու տանք նաեւ «Այրող Տիղրիս»ի մասին համացանցի վրայ գետնողւած դէմ եւ թեր այլ տեսակետներ:

տակ: Ան մահացաւ 1961ին, 80 տարեկան հասակին: Մեր ընտանիքը Այնթափի մէջ ունէր բազմաթիւ հայ ընտանիքներ, մենք կը սիրէինք հայերը, որովհետեւ անոնք չափազանց խաղաղասէր եւ շնորհալի էին: Մենք միշտ կը գնահատէինք զարգացումը եւ ճշմարտութիւնը: Այս մէկը շատ զօրեւոր է ըսել, սակայն փրոֆ. Պալագեանի յուզիչ գիրքը կարգալէ ետք պարտաւորուած կը զգամ արտայայտուելու: Մեծ հայրս բարեպաշտ, անձ մըն էր, որ իր երիտասարդ տարիներուն գտնուած էր դաժան կացութեան մը մէջ: Ինչպէս մենք կը ճանչնայինք զինք, ան չափազանց հեզ եւ տխուր մարդ մըն էր՝ կ'անուած յանցանքի այնպիսի զգացումով մը, որ երբեմն օրեր, նոյնիսկ շաբաթներ անօթի եւ անքուն կը մնար: Անպատմելի պատերազմական ոճիրներ գործած էր Համաշխարհային Ա. Պատերազմին ընթացքին: Ան մեծ ոճիրներ գործած էր մարդկութեան դէմ, ոճրագործ եւ բռնաբարող մըն էր, սպաննած էր երեսնանէր եւ տարեց կիներ. ան պատասխանատու էր վանի մէջ հայկական պատմական բազմաթիւ կոթողներու եւ եկեղեցիներու քանդումին: Երբ եղբայրս եւ ես բաւարար խելահաս դարձանք այս բոլորը հասկնալու, ան սկսաւ պատմել իր երիտասարդութեան մասին՝ ամէն օր, մինչեւ իր մահը: Ան մեզի խօսեցաւ ձեռնի Պէյի մասին՝ յայտնելով, թէ հոգեկան ինչպիսի հիւանդ մըն էր ան, եւ խրատելով՝ երբեք չվախնայ ճշմարտութեան: Մեծ հայրս բարի մարդ մըն էր, ի վերջոյ ունէր բարի սիրտ մը, սակայն իրականութիւնը այն է, որ ինք այն դահիճներէն էր, որոնք մասին կը խօսի փրոֆ. Պալագեան: Բոլոր հայ բարեկամներուս կ'ուզեմ ըսել, թէ ներողութիւն կը խնդրեմ մեծ հօրս եւ երկրիս ձեռն ժողովուրդին եւ սկսած ինչպիսի նկատմամբ կատարած արարքներուն համար: Յատկապէս ներողութիւն կը խնդրեմ մեծ հօրս ոճիրներուն համար. ներողութիւն կը խնդրեմ

Եթեմաստուն մէկ տարեկան թուրք-ամերիկացի մըն եմ, ծնած եմ 1932ին, կազիալթէյ (նախապէս ճանչցուած իր-

ԵՆԿԿԸ ԱԶՐՊԵՅԾԱՆՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ



Ազրպէյճան այցելող ԵԱՀԿի նախագահ եւ Հոլանտա-յի արտաքին գործոց նախարար Թասփ ար Հուսփ Ենֆրը 22 Հոկտեմբերին հանդիպում մը ունեցաւ նորընտիր նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

«Արմէնփոս» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ հանդիպումին ընթացքին Ալիեւ յայտնած է, որ Ազրպէյճան ԵԱՀԿի Մինսքի խմբակէն դարարողեան տագնապի լուծման դժուր խաղաղարար նոր նախաձեռնութիւններ կ'ակնկալէ: «Մենք տագնապին արդարացի լուծում կ'ուզենք եւ կը կարծենք, որ այդ ուղղութեամբ ԵԱՀԿի Մինսքի խմբակին գործունէութիւնը պէտք է աշխուժանայ», ըսած է Ալիեւ:

Ալիեւ Մինսքի խմբակի համաձայնագրահանգրուան հետ բանակցելու պատրաստակամութիւն յայտնած է եւ հաւաստեցուցած է, որ՝ «միջազգային միջնորդներու ընտր առաջարկները ուղարկութեամբ կը քննարկուին»: «Յոյսով եմ, որ նոր առաջարկները կ'ապահովեն միջազգային իրաւական կանոններու պահպանումը եւ թոյլ կու տան հասնելու լուծման», նշած է ան: Նորընտիր նախագահը ըսած է, որ թէ՛ Ազրպէյճանը, թէ՛ Հայաստանը չհազարգուած են դարարողեան խնդիրը շուտափոյժ լուծումով: Ան յայտնած է, որ երկուստեք բարի կամքի առկայութեան պարագային տագնապը կարելի է լուծել արդարացիօրէն եւ այդ մէկը «ազդակ կ'ըլլայ ինչպէս Ազրպէյճանի եւ Հայաստանի, այնպէս ալ ամբողջ շրջանի զարգացման համար»:

Հանդիպումին ետք տրուած մամուլի ասուլիսի մը ընթացքին Ենֆրը կոչ ըրաւ Պարսի իշխանութիւններուն, որ անմիջապէս ազատ արձակեն քաղաքական պատճառներով լատտարկուած քաղաքացիները:

Ըստ Ազրպէյճանի իշխանութեանց, նախագահական ընտրութիւններէն ետք տեղի ունեցած բողոքի ցուցերուն ընթացքին ձեռնարկուած է մօտաւորապէս 400 հոգի, որոնցմէ 62ը պաշտօնապէս ամբաստանուած են:

Ազրպէյճանի ընդհանրութեան ազդեցիկները հաղորդեցին, թէ ԵԱՀԿի կողմէ մէկ օր ետք Ազրպէյճանի իշխանութիւնները ազատ արձակած են նախագահական ընտրութիւններու յաջորդող օրերուն ձեռքարկուած անելի քան 450 քաղաքական բանտարկեալներէն 63ը: Ըստ ազերի պաշտօնատարներու, ձեռքարկուածներէն 67ը արդէն իսկ ամբաստանուած են եւ կրնան մինչեւ 12 տարուան բանտարկութեան դատապարտուի:

Ոստիկանութեան վարչազ միջամտութեան գոհ գացած էին երեք հոգի եւ վերաւորուած՝ 100 ուրիշներ: Ըստ ազերի պաշտօնատարի մը, Ալիեւ հանդիպումին ընթացքին չեղած է, թէ ոստիկանութեան ատած քայլերը «օրէնքի սահմաններուն մէջ» եղած են:

Հոլանտացի նախարար անլեյուց, թէ Արեւմուտքը Ալիեւի հանդէպ իր կեցուածքը պիտի որոշէ ժողովրդավարական սկզբունքներու հանդէպ անոր կեցուածքին համեմատ:

ԸՍՏ ԱԶՐՊԵՅԾԱՆՑԻ ԲԱՐԱՔԱԳԵՏԻՍ ԹՈՒՐԻՔ ԳՈՐԾԱՐԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՊԻՏԻ ԶԿԱՏԱՐԵՆ

«Արմինֆո» լրատու գործակալութիւնը իր տեղեկութիւնները քաղելով ազրպէյճանական ազդեցիկներէ՝ կը հաղորդէ, որ ազրպէյճանացի քաղաքագէտ Թոֆիք Զուլֆուզով վերջերս յայտնած է, թէ տակաւին կանոնաւոր Պոլսի - Երեւան - Պոլսի թռիչքի հաստատման առնչելով թեմաբար կողմէն ակնկալութիւններ ունենայ: «Ես չեմ հաւատար, որ թուրք գործարարները ներդրումներ կը կատարեն Հայաստանի մէջ, որովհետեւ անոր ներքին չուկան շատ սահմանափակ է», ըսած է՝ Զուլֆուզովը՝ անկէպէտ, որ թուրքիս հասարակարար նման քայլի մը ձեռնարկած է Հայաստանի մէջ հասարակական կարծիք ձեւաւորելու կամ այլ իրադարձութիւններու նախապատրաստական նպատակով:



րեւ Այնթափ): Ընտանիքս՝ մեծ հայրս եւ իրենց ընտանիքները Միացեալ Նահանգներ փոխադրուած են Համաշխարհային Բ. Պատերազմէն ետք, 1945ին, երբ ես միայն 13 տարեկան էի: Ուսումս ստացած եմ Միացեալ Նահանգներու մէջ: 1955ին շրջանաւարտ եղած եմ համալսարանէն՝ բնագիտութեան վկայականով: Կարգացի փրոֆ. Պալագեանի յուզիչ գիրքը (Փիթըր Պալագեանի վերջերս հրատարակուած «Այրող Տիղրիս» գիրքը, «Ա...» մէկ շունչով եւ առանց արցունքներս կարենալ գսպելու: Մեծ հայրս Համաշխարհային Ա. Պատերազմին ընթացքին ծառայած է ձեռնի Պէյի համամաստարտութեան

մեր կողմէ ձեռնկալներուն քանդումին համար, իմ երկրիս կեղծաւորութեան համար, սակայն կ'ուզեմ ըսել, որ կան մեծ թիւով թուրքեր (յատկապէս թուրք-ամերիկացիներ), որոնք չեն ժխտեր 1915ի եղելութիւններուն ճշմարտացիութիւնը: Կը խնդրեմ, որ մեզ չատէք, եւ եթէ կարելիութիւնը ունենայի, կը վերադարձնէի այն բոլորը, զորս իմ ընտանիքս խլած է ձեռքէ: Պարգապէս այս բոլորը կ'ուզէի ըսել իրրեւ չեմեղանք: Գիտեմ, բաւարար չէ իրականութեան մէջ ըլլին է: Կ'առաջարկեմ կարողալ «Այրող Տիղրիս»ը՝ բաւական լաւ գրուած եւ չափազանց տխուր գիրք մը:

ԱՅԼ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

«Ոչ մէկ փաստ կայ, գոր գրողը կը ներկայացնէ իբրեւ ապացոյց: Պարզապէս տարածանք իրենց բն եւ սուտեր: Բոլոր հայերը, որոնք ատելութեամբ լեցուած են բուրբ ժողովուրդին նկատմամբ, մեր երկիրը եւ ազգը կը մեղադրեն 80 տարիէ ի վեր: Հակառակ բոլոր պատմաբաններուն համար բացուած իրապէս արխիւներուն, ոչ մէկ հայ պատմաբան եկած է ուսումնասիրած է գտնուել: Գիրքին մէջ ոչ մէկ բան նշուած է ցարակաւ Ռուսիոյ հետ գործակցող հայերուն մասին պատմաբանի բնութագրի, որ լսելի մ'իյնում բուրբի կողմէ: Ոչ մէկ բան նշուած է Պաշտօնապահութեան անգլոֆոն աւագակախութիւններուն մասին, որոնք սպաննած են բունաբար եւ հազարաւոր բուրբեր Արեւելեան Թուրքիոյ մէջ, ուսուական ներխուժման ընթացքին: Հայերու մարտավարութիւնը հիմնուած է հերթափոխութեան վրայ:»

ՄՈՒՐԱՏ ԵՆԻՍԱԶ

Պոլսի, 15 Հոկտեմբեր, 2003

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՄԷՉ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ՁԱԽԱՔՅԻ ԱԶԱՍՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՐՔ

Վերջերս Հայաստանի Ազգային գրադարանին մէջ տեղի ունեցաւ բանաստեղծ Վարդ Ղազարեանի «Ջաւախքի արձիւնները Արցախի լեռներում» գիրքի շնորհահանդէսը: Գիրքը կը վերաբերի արցախցի 53 ազատամարտիկներու: «Գրիչ վերցուցած եմ՝ խօսելու ջաւախքի այն քաջերի կենտրոն մասին, որոնք ո՛չ թէ վերին հրամանով, այլ սրտի պահանջով ու պարտադրանքով նետուեցան Արցախի ազատագրման եւ ճակատեցան զայն շղթաներէ գերծ պահելու, պատմութեան անուղղելի սխալը ուղղելու եւ անարգուած արդարութիւնը ետ բերելու՝ անկարելի հնարքը արեամբ վերագտնելու համար», նշած է գրագէտ Մկրտիչ Սարգսեան Ջաւախքի, Ախալցխայի եւ Ծալկայի ազատամարտիկներուն վերաբերող այս գիրքին յանձնարարին մէջ:

Նշենք, որ բանաստեղծ Վարդ Ղազարեան ծնած է Գանձայի մէջ: Երկար տարիներ աշխատած է իբրեւ հայտնի լեռնային եւ գրականութեան ուսուցիչ: Աշխատած է նաեւ իբրեւ թղթակից՝ Հայաստանի եւ Ջաւախքի տարբեր թերթերուն:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՆԻ ՏԱԳԵՆՊԻՆ ԿԿԱՍՄԱՐԻՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՆԵՐՎԱՅԱՅՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայրենի «Ազգ» օրաթերթը վերջերս տեղեկացուց, թէ Հայաստանի Արեւելագիտութեան Հիմնարկը հրատարակած է հիմնարկի աշխատակից, պատմական գիտութիւններու թեկնածու, արքայազն Մարաթ Փաշայեանի «Իսլամական Խորհրդաժողովը Կազմակերպութիւնը. նկատակները, գործունէութիւնը, արքայազն Մարաթ Փաշայեանի գործունէութեան առանձնապատկերները, ինչպէս նաեւ՝ 1969 - 2000 տարիներու իսլամական հիմնարկին առնչուող հարցերու նկատմամբ կազմակերպութեան զիրքերը: Ուշագրաւ է, որ ուսումնասիրութիւնը անընդարձակ է նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապին նկատմամբ կազմակերպութեան նկատմամբ հիմնարկի նկատմամբ կազմակերպութեան նկատմամբ հիմնարկին գործունէութեան համաձայն, իսլամական այս կազմակերպութեան ազրպէյճանամէտ զիրքերը չունեն Լեռնային Ղարաբաղի տագնապին նկատմամբ հիմնարկի նկատմամբ կազմակերպութեան սկզբունքները վրայ եւ ձեւաւորուած է բացառապէս ազրպէյճանական տեղեկատուութեան միջոցով: Միաժամանակ, սակայն, յատկանշական է, որ կազմակերպութիւնը ցարդ որեւէ յստակ քայլի չէ ղիմած՝ այս գծով իր ընդունած որոշումներն ու յայտարարութիւնները գործնական գետնի վրայ իրագործելու համար:

ՅԵՂԱՊԵՏՈՒԹՅՆԵՆ ՎԵՐԱՊՈՐՏԻ ՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԱՍՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ ԹԱՍԵՐԱԿԱՆ ԵՐԿ

«Պու Էրոն Փրեւ» տպարանը վերջերս հաղորդագրութեամբ մը տեղեկացուց, թէ հրատարակած է քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածի «Երաւի իմ տը Բրեյտը» խորհրդակցական գրքի հրատարական երկը, որ կը վերաբերի Յեղափոխութեան վերապրողի մը եւ անոր շառաւիղներուն պատմութեան: Երկը կը ներկայացնէ Յեղափոխութեան ընթացքին Պոլսիէն բռնազաղթած Փրեւի պատմութիւնը, Գանատա անոր հասնիլը եւ յաջորդող սերունդներուն վրայ Յեղափոխութեան ազդեցությունը: Հաղորդակցութեան համաձայն, թատերական երկը կ'արժարէ նաեւ հրատարակուի Միւրեքի, ազգային պատկանելիութեան եւ այլ միջազգային հարցերու վերաբերող նիւթեր:

Միջազգային Քաղաքական Կեսար

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ԱՐԵՄՈՒՏՔԸ ԳՆՇՈՒՄ ԿԸ ԲԱՆԵՑՆԵ ՎՐԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ

Դէպի Վրաստան ամբ-
րիկացի բարձրաստիճան
պաշտօնատարներուն այ-
ցելու թիւները կը շարուն-
ակուին: Յուլիսին նախ-
կին արտաքին գործոց նա-
խարար ձէյմա Պէյբըրի
կարգն էր, իսկ Հոկտեմ-
բերի սկիզբը անոր յաջոր-
դեցին ծերակուտական
ձոն ՄըքՔէյն, ամերիկե-
ան բանակի սպայակոյտի
պետերու միացեալ ժողո-
վի նախկին նախագահ զօ-
րավար ձոն Շալթըալիլի
եւ արտաքին գործոց նախ-
կին փոխ նախարար
Սթրոպ Թալպոթ: Բոլորին
նպատակն ալ մէկն էր՝
սպառնալի ազատ եւ ար-
դար ընտրութիւններ, սա-
կայ կասկածներ կան, որ
Նոյեմբերի ընտրութիւն-
ները պիտի առաջնորդեն
Վրաստանի հետ Միացեալ
Նահանգներու յարաբե-
րութեանց վերանայան,
նկատի առնելով, որ
Վրաստան մեծագոյն օգ-
տուողներէն է ամերիկե-
ան օտանդակութիւննե-
րէն:

Վրաստանի նախագահ
էտուարտ Շեւարտնաձէ
հաճոյալից ոճով հակա-
դարձեց ամերիկացի պաշ-
տօնատարներուն այցելու-
թեան լուրին, սակայն
անոր պատասխանը, թէ՛
«չեմ գիտեր, թէ ինչ կը
ծրագրեն ընել մեզի, կու
զան մեզի օգնելու», թէ՛
ճգմելու համար» ցոյց կու
տայ, որ հետզհետէ Արեւ-
մուտքը նեւրի մօտէն կը
հետեւի ընտրութիւննե-
րուն, եւ Շեւարտնաձէ ու
իր կառավարութիւնը յա-
ւելեալ ճնշումի տակ կը
զգայ իրենք զիրենք:

24 Սեպտեմբերին Միաց-
եալ Նահանգներու ար-
տաքին գործոց նախարար-
ութիւնը յանդերձ յայ-
տարարեց, թէ բաւական
մեծ բաժին մը պիտի կրճա-
ցուի Վրաստանի յատկա-
ցուցած օտանդակութե-
նէն, իսկ անցնող ամառ
Համալսարանի Դրամա-
տունը առկայեց ընկերա-
յին եւ ուսանողների ճարտար-
արուեստի ծրագրերը
Վրաստանի մէջ, փառօն-
թեան զծով մտահոգու-
թիւններու պատճառով:

Ամերիկացի պաշտօնա-
տարները Վրաստան այցե-
լեցին նաեւ ներկայացնե-
լու համար Միջազգային
Յարաբերութիւններու
Ազգային Ժողովրդավա-
րական Հիմնարկը («էն-
Տի. Այ.»), որ ներկայիս
մեծ կշիռ ունի Ուաշինգ-
թոնի մէջ:

Եւրոպան եւ իր ճնշու-
մը կը սաստկացնէ Վրաս-
տանի վրայ: Մայիսին Եւ-
րոպական Խորհուրդը
զգուշացուց Վրաստանը,
որ կրնայ գինք իր սեւ ցան-
կին վրայ գնել բարեկար-
գումներ չիրագործելու եւ
փառօնութիւնը չկարենալ
յաղթահարելու պատճա-
ռով:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՄՏԱՀՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ
Մտահոգութիւններ
կան ընտրական կեդրո-
նական Յանձնախումբին,
ինչպէս նաեւ շրջանային
մակարդակի խախտումնե-
րու գծով: Քուլիկովի
ընդհանրապէս կասկա-
ծի տակ է, որովհետեւ հոն
կան մահացածներու
անուններ: Կայ նաեւ «քա-
րուսէլ» կոչուած երեւոյ-

թը, ուր մէկ հոգի քանի մը
քուէատուփերու մէջ կը
քուէարկէ: Կեդրոնական
յանձնախումբը պարտա-
կանութիւն ստանձնած էր
վերադասաւորելու այդ
ցանկերը մինչեւ 20 Հոկ-
տեմբեր, արձանագրու-
թեան պայմանագրի
աւարտը: Այսպիսով, որոշ
խտուածներ կը բանեցուի,
եւ ամէն պարագայի ըը-
ւէարկող ձեռքերը պիտի
կնքուին մէկէ աւելի ան-
գամներ քուէարկելու ար-
գիւելու համար:

ՀՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Զախող ընտրութիւն-
ներու հետեւանքները
յստակ չեն: «էն. Տի. Այ.»
կարծիքով, «ծանր հար-
ւած մը կը հասցուի
(Վրաստանի) միջազգային
դիրքին»: Միացեալ Նա-
հանգները արդէն իսկ
լրջօրէն վնասեցին Շե-
ւարտնաձէի միջազգային
դիրքին՝ իրենց օտանդա-
կութիւնը կրճատելով:
Արտաքին գործոց նախ-
արարութիւնը այդ որոշու-
մը չկապեց ժողովրդավա-
րական խախտումներու,
այլ՝ այդ օտանդակութեան
նպատակը հանդիսացող
ստեպսական ծրագրերը
չկարենալ իրագործելու:

Սակայն յաւելեալ
կրճատումներ կը նախա-
տեսուին: Օգոստոսին
Վրաստանի կառավարու-
թիւնը գրեթէ երկրին կէ-
սին ելելու օտանդակութիւն
բաշխելու իրաւունքը վա-
ճառեց ուսական ջեռուց-
ման եւ ելելու օտանդակու-
թեան հսկայ «Ուսանողի
Միացեալ Համակարգը»
ընկերութեան: Ասոր նա-
խորդած էր Յուլիսին Շե-
ւարտնաձէի ստորագրած
25 տարուան համաձայնա-
գիրը ուսական «Կազ-
փրոմ» հսկայ ընկերու-
թեան հետ:

Ուսանողի հարցերով
Միացեալ Նահանգներու
կառավարական խորհու-
րատու Սթիվ Ման Յունի-
սին Թիֆլիս այցելած էր
փոխանցելու համար այն
պատգամը, թէ՛ «Վրաս-
տան պէտք է դիմէ որեւէ
քայլի, որ կ'ականահարէ
Արեւելը-Արեւմուտքը ու-
ժանկէ միջինցքին ընձե-
ռած կարեւոր խոստումը»:
Կովկասի մէջ արեւմտեան
մեծագոյն ներդրումը,
ինչպէս նաեւ Միջին Արե-
ւելքէն եւ Ռուսիան Կով-
կասի կայսերայի ըլլալը
նուազեցնելու Միացեալ
Նահանգներուն եւ Եւրո-
պայի նկատմամբ արդարաց-
րելի երաշխիքն է Պաքու-
թիֆլիս-ձէյհան քարիւ-
ղատարը: Անոր քովէն
անցնող կազատար մը հե-
տագային պէտք է կառուց-
ւի:

Աշխարհաքաղաքական
տուեանքներու կարեւորու-
թիւնը անգամ մը եւս սե-
րանի վրայ դրուեցաւ «էն-
Տի. Այ.»ի պատուիրակու-
թեան այցելութեան ըն-
թացքին, երբ ընտրութիւն-
ներ ջատագովելուն չափ
«պիտի ուզէինք, որ Վրաս-
տան կարելի եղածին չափ
անկախ ըլլայ Ռուսիայէն
կամ որեւէ այլ երկրէ»:
Հակառակ կտրուկ կրճա-

տումներուն, Վրաստան
տակաւին պիտի մնայ
ամերիկեան օտանդակու-
թեանց գլխաւոր ստացող-
ներէն մէկը. անկա որոշ
տարիներու իսրայէլէն
ետք երկրորդ մեծագոյն
օտանդակութիւն ստացո-
ղը եղած է:

Մինչ ընտրութիւնները
միջազգային լարուածու-
թիւններ կը պատճառեն,
անոնք նաեւ վայրագու-
թիւններու առիթներ կը
ստեղծեն Վրաստանի մէջ:
Վերջին շաբաթներուն ար-
ձանագրուած են վեց կա-
րելորդ դէպքեր: Իշխանու-
թիւնները բազմաթիւ
առիթներով ճնշած են
ընդդիմադիրները:

Ընդդիմութիւնը նաեւ
զոհ դարձաւ անձանց թի-
ւորակումներու: Գոր-
ծիչներ ձեռք են թափուե-
ցան, ժողովարար մը յար-
ձակումի ենթարկուեցաւ
եւ օրաթերթի մը խմբա-
գրատունը կողոպտուի
ենթարկուեցաւ:

Սակայն վայրագու-
թիւնը միակողմանի չէ, 11
Հոկտեմբերին, Ընտրա-
կան Կեդրոնական Յանձ-
նախումբին անդամներէն
մէկը ծանր ձեռք ենթար-
կուեցաւ Թիֆլիսի մէջ:
Խօսքի պատերազմը
եւս կծու բնույթ ստացաւ,
կառավարածէր զաշնակ-
ցութեան բանբեր Իրին
Սարիշիլի մարտասանեց
ընդդիմադիր զաշնակցու-
թիւններէն մէկուն ղեկա-
վար, խորհրդարանի նա-
խագահ Նիտո Պուրճանա-
ձէն՝ Ռուսիայէն նրբա-
կան յատկացում ստանա-
լու յանցանքով, մինչ
Պուրճանաձէն իր կարգին
ամբաստանեց իշխանու-
թիւնները՝ «ընտրութիւն-
ները չկայացնելու համար
ամէն ինչ ընելու» պատ-
րաստակամութեամբ,
նկատի առնելով, որ
անոնք չունին յաղթելու
յոյս:

Ազգային Շարժում
Կուսակցութեան ղեկա-
վար Միխայիլ Սահակա-
վիլի Շեւարտնաձէն ամ-
բաստանեց վայրագու-
թիւնները կազմակերպե-
լու յանցանքով:
Ընտրութիւններուն
պատճառով ստեղծուած
հակառակութիւններուն
բնույթն ու չափը մտածել
կու տան, որ դժուար յե-
տընտրական ժամանա-
կաշրջան մը պիտի ապրի
երկիրը, մինչ վիճակու-
թիւնները կազմակերպե-
լու արդէն իսկ կը տա-
րածուին անվտանգութե-
նէ՝ իրենց քաղաքական
դէմքերուն նկատմամբ:

«էն. Տի. Այ.» զգուշա-
ցուց «վստահութեան
տագնապ» մը զոյացու-
մէն, «հարազատօրէն ժո-
ղովրդավարական ընտ-
րութիւններ» չկայացնե-
լու պարագային, վրացի-
ներուն մեծ մասը առանց
այս վերջինին խնդիրնե-
րուն արդէն իսկ կը տա-
րածուին անվտանգութե-
նէ՝ իրենց քաղաքական
դէմքերուն նկատմամբ:

ՎԱՐԼԱՄ
ԶՔՈՒՄԱՆԻ
«Եւրոպէյի Կազմ» կազմ

ՈՒՍԵՆԿԱԾԸ

ԴԵՄՈՎՐԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՆ ԴԵՄ ԴՆԵԼՈՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՕՐԱԻՈՐ ԱԼԻՔԻՆ

«Ռեկընի յեղափոխութիւն» կոչուած գաղափարախո-
սական-քաղաքական ալիքին իբրեւ արդիւնք 1980ին նա-
խագահ Ռոնըյտ Ռեկընի Սպիտակ Տուն հասնելէն ի վեր
դեմոկրատականները իրենք զիրենք պաշարուած կը
զգան: Նոյնիսկ Պիլ Քլինթոնի երեւոյթը եւ անոր ուժ
տարուան նախագահութիւնը չյաջողեցան անոնց մէջէն
վանել հանրապետական գլոյղ-անցնող մեքենայի մը դէմ
կանգնելուն մտահոգութիւնը, ամառանդ որ հանրա-
պետականները այլեւս աղաղակող ներկայութիւն եղած
են Քոնկրէսի, ուսումնասիրութիւններու կեդրոննե-
րու, մինչեւ իսկ կարգ մը լրատուական միջոցներու
(յատկապէս ձայնասփիւռի կայաններու), պատկերաս-
փիւռի «Ֆոքս» կայանին, ինչպէս նաեւ պահպանողա-
կան եկեղեցիներուն մէջ:

Դեմոկրատականները, որոնք ներկայիս կը գիտակ-
ցին, թէ նախագահ ձորձ Պուշ, այն ասպետը, որ կարե-
ւոր դերը մը գրաւեց ամերիկացիներուն հաւաքական
յիշողութեան մէջ, երբ ղեկավարեց հարեկուսութեան
դէմ պատերազմը եւ մէջտեղէն վերցուց Պաշտատի
բանաստեղծ, այլեւս առաջուն պէս «գրահաւորուած»
չէ, իսկ անոր սուրը, ինչպէս որ էր մէկ տարի առաջ,
հատու ըլլալէ դադարած է, սկսած են պատրաստել իրենց
զէնքերը յառաջիկայ ընտրական պայքարին համար: Դե-
մոկրատականներուն զէնքերը միայն ընտրողներուն
քուէները չեն, այլ նաեւ դրամը, որուն ձայնը միւս բո-
լոր ձայներէն բարձր կը հնչէ ամերիկեան ընտրութիւն-
ներուն ընթացքին «օրինակ» միլիոնատէր ձորձ Սորոս
10 միլիոն տոլար յատկացուց Պուշէն ձերբագտելու
արշախն համար, եւ ուսումնասիրութիւններու կեդ-
րոնները. այս վերջիններուն կարեւորութիւնը կը կա-
յանայ քաղաքական եւ գաղափարական շրջագիծերը
ճշդելուն մէջ այն ներքին եւ արտաքին հարցերուն,
որոնք կը հետաքրքրեն կամ պէտք է հետաքրքրեն ամե-
րիկացի քուէարկողը:

Ռեկընի Սպիտակ Տուն հասնելէն առաջ, հանրապե-
տականները սկսան կազմակերպուած եւ ուսումնասիր-
ւած պայքար մը մղել երկրին մէջ տիրած ազատական
հասկացողութիւններուն դէմ, որոնք ըստ իրենց կար-
ծիքին յանգեցան քաղաքական, ընկերային եւ մշակու-
թային արմատական փոփոխութիւններու, որոնք չէին
համապատասխան իրենց շահերուն: Այս հասկացո-
ղութիւններուն մաս կը կազմեն 1960ականներուն տա-
րածու գտած քաղաքացիական իրաւունքներուն շար-
ժումը, Վիեթնամի պատերազմին ընդդիմացող շարժու-
մը եւ այսպէս կոչուած «սեռային յեղափոխութիւնը»:

Այս հակադիր պայքարին մէջ ուսումնասիրական
կեդրոններու եւ ի մասնաւորի 1973ին հիմնադրուած
«Հերիթձէ Հիմնադրամ»ին մեծ դերը վերապահուած էր-
կարեւոր դեր ունէին նաեւ ձայնասփիւռի տեղական
կայանները, որոնց տիրեցին պահպանողականներ եւ
աջակողմեաններ՝ Ռեկընի Սպիտակ Տուն հասնելու
նպատակով քուէարկողները զօրաշարժի ենթարկելու
համար:

Եւ կը թուի, թէ դեմոկրատականները դաս մը քա-
ղած էին հանրապետական-աջակողմեան այս գիրքին:
Հոսկէ՝ կարգ մը դեմոկրատական քաղաքագէտներուն
եւ ակադեմիականներուն նախաձեռնութիւնը, ստեղծելու
դեմոկրատական-ազատական ուսումնասիրական կեդ-
րոն մը՝ իբրեւ քաղաքական եւ գաղափարախոսական
պատասխան «Հերիթձէ Հիմնադրամ»ին եւ ուսումնա-
սիրական այլ կեդրոններու, որ կը համակրին հանրա-
պետականներուն եւ անոնց առաջադրանքներուն:

Միացեալ Նահանգներու մտաւորական եւ քաղաքա-
կան ուսումնասիրական կեդրոնները իրենց տեսակին
մէջ բացառիկ դեր մը կը կատարեն, որովհետեւ կ'ազ-
դեն քաղաքական նկատիներն եւ երկու կուսակցութիւն-
ներու ընտրական ծրագրերներուն մշակումին վրայ:
Ասիկա երեւոյթ մըն է, որով Միացեալ Նահանգներ
մեծ չափով կ'առանձնանան արեւմտեան ժողովրդավա-
րական միւս պետութիւններէն: Գոյութիւն ունի օրկա-
նական կապ մը մէկ կողմէ ուսումնասիրական կեդրոն-
ներու, ամերիկեան համալսարաններու եւ անոնց մէջ
աշխատող մտաւորականներու եւ ակադեմիականներու,
իսկ միւս կողմէ քաղաքական եւ տնտեսական որոշու-
մի ստեղծման եւ հասարակական կարծիքին վրայ ազ-
դելու կեդրոններուն միջեւ:

Անցնող տասնամակներուն Միացեալ Նահանգնե-
րու մէջ ուսումնասիրական լուրջ կեդրոններու սահ-
մանափակ թիւ մը կար, իսկ անոնց մեծամասնութիւնը
իր գրասենեակը բացած էր Ուաշինգթոնի եւ Նիւ Եորքի
մէջ: Տարիներ ետք ամերիկեան զանազան քաղաք-
ներու մէջ սկսան ի յայտ գալ ուսումնասիրական բազ-
մաթիւ հաստատութիւններ եւ կեդրոններ, որոնք թիւը
ներկայիս իւրաքանչիւր քաղաքական խմբակցութիւն
կամ ընկերային հաստուած ունի իր առաջադրանքնե-
րուն մասին քարոզութիւն կատարող ուսումնասիրա-
կան սեփական հաստատութիւն:

Այնպէս, որ դեմոկրատականները լրջօրէն կը մտա-
ծեն օգտուել իրենց ընձեռուած կարելիութիւններէն՝
հանրապետականներուն դէմ լուրջ գրոհ տարու համար:

«Ասֆիր»
ՀԻՇԱՄ ՄԵԼԼԷՄ

«ԱԶԳԱԿ»
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ» ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԻ ՕԴԱԶՈՒՆԵՐՈՒՆ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Մեծ թիւով քաղաքական մեկնաբաններ լաւատեսու-
թեամբ կը մօտենան իսրայէլացի կարգ մը օդաչուներու
ու պատամրութեան՝ զայն նկատելով ծայրայեղու-
թիւնն ու վայրագութիւնները մեղմացնելու ուղղու-
թեամբ կատարուած քայլ մը: Ուրիշներ այս մէկը կը
նկատեն լոյսի ճաճանք մը, որ կրնայ լուսաւորել իս-
րայիցիներու միտքերը ճանապարհը:

Օդաչուները ստորագրեցին բողոքագիր մը՝ ըսելով
թէ պիտի չմասնակցին կազայի եւ Այսրայիցիներին մէջ
պաղեստինցի քաղաքացիներու դէմ շղթայագերծուող
զինուորական գործողութիւններուն: Անոնց այս կեց-
ւածքը իսրայէլի մէջ թէ՛ այլուր մեծ աղմուկ բարձրա-
ցուց: Այս պատամրութիւնը իր տեսակին մէջ առաջի-
նը չէ: Ան մէկ մասնիկն է իսրայիցիներու փնտրուած
մէջ գտնուող իսրայէլացի հատուածի մը որդեգրած
կեցուածքներուն:

Ապստամբութիւններու ամէնէն յիշարժաններէն
նշեք հետեւեալները.
● 1988ին 160 զինուորականներ բողոքագիր մը ստոր-
գրեցին՝ մերժելով կազայի եւ Այսրայիցիներին մէջ
զինուորական գործողութիւններու մասնակցելը:
● Նոյնպէս 1988ի ֆետրուարին, իսրայէլացի հազար
զինուորականներ Իցհար Շամիրի յղեցին նամակ մը
պահանջելով վերջ տալ «Մեծ իսրայէլ»ի գաղափարին
տարածման:

● 1987 - 1990 ժամանակաշրջանին վրայ երկարող
առաջին ինթիֆա տային ընթացքին նման կեցուածքնե-
րու թիւը բարձրացաւ: Բռնագրաւող բանակէն զի-
նուորներ հրասայլերու վրայ գրուած իրենց կոչերով
կը քաջաբերէին իրենց ընկերակիցները, որպէսզի անոնք
լքեն զինուորական ծառայութիւնը:

● Ապստամբութեան յաճախական դէպքեր պատահե-
ցան հարաւային Լիբանանի ազատագրութեան պայքա-
րին ընթացքին, երբ մեծ թիւով հրեաներ, իրենց կեանք-
ը կորսնցնուցած հրեայ զինուորներու ծնողներուն հո-
վանաւորութեամբ, մերժեցին բանակին միանալ:
● 2000ին աւելի քան 50 զինուորներ ստորագրեցին
յայտարարութիւն մը, որ կը մերժէր ներխուժել Այսր-
այիցիներու եւ կոչ կ'ուղղէր այլ զինուորներու զինու-
որական ծառայութեան չմասնակցելը:

Հետեւեալը, վերջնեալ նորագոյն միջազգայն
անակաւ մըն է, եւ անոր ազդեցութիւնը կը մնայ սահ-
մանափակ: Նախապէս իսրայէլեան ոչ մէկ կառավարու-
թիւն ազդուած է պատամրութեան եւ բողոքի կեց-
ւածքներէ:

Թէ՛ է զինուորականներուն այս կեցուածքները մա-
սամը մարդկային կեանքի նկատմամբ յարգանքէ կը
բխին, սակայն ինթիֆա տան իր կարգին պատճառ դար-
ձած է բողոքի ալիքին բարձրացման:

● Առաջին եւ երկրորդ ինթիֆա տաները իսրայէլեան
բանակը մատնեցին կացութեան մը, որուն վարժուած
չէր այն: Զինուորականներ սկսան վերաթեւորել իրենց
քայլերը:

● Աքսայի ինթիֆա տան բացայտեց իսրայէլեան
բանակի մէկ տկարութիւնը. անոր կը պակասէր հզօր բա-
նակի մը երաշխիք հանդիսացող կարեւորագոյն հիմ-
քերը. արդարեւ, իսրայէլեան բանակը պատմական
խորք եւ զինուորական մեծ ղեկավար մը չունէր՝ ըլլա-
լով նոր երկիր մը, որուն զինուորականները տարբեր
քաղաքացիութիւններ ունեցող անհատներ են, որոնք
միացնողը «Աւետեց երկիր» վերադառնալու սուտն է:

● Ինթիֆա տան տեղողութիւնը մեռնելու վախ եւ
պազալի նկատմամբ անորոշութիւն տարածեց իսրա-
յէլեան ընկերութեան եւ բանակին մէջ:
● Հակառակ այն իրողութեան, որ իրենց հակառա-
կորդները քարերով զինուած են միայն, իսրայէլեան
բանակը իր հրասայլերու եւ ուղղաթիւներով չկրցաւ
յաջողութիւն արձանագրել:

Այն հրեաները, որոնք հաստատուեցան Պաղեստինի
մէջ եւ զայն կոչեցին իսրայէլ, կ'ուզեն իսրայիցիներ
իսրայիցիները իսրայէլ, կ'ուզեն իսր

